600.0010.25.01.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

25 հունվարի 2017 թվականի №10Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի №232Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և հաշվի առնելով «ԴԻՋԻԹԼ-ԹԵՔՆՈԼՈՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի հունվարի 11-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի օգոստոսի 10-ի «ԴԻՋԻԹԼ-ԹԵՔՆՈԼՈՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիա տրամադրելու մասին» №232Ա որոշման՝
   1) 1-ին կետում «տրամադրել» բառից հետո լրացնել «Երևան քաղաքի, Արարատի,» բառերը.
   2) 2-րդ կետով հաստատված հավելվածի՝ «ԴԻՋԻԹԼ-ԹԵՔՆՈԼՈՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) ԼԿ №1177 լիցենզիայի պայմանների 4 կետում «տարածքը» բառից հետո լրացնել «Երևան քաղաքի, Արարատի,» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
25 հունվարի 2017թ.
ժամը 16[00]